ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

N 741
11 դեկտեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 136-Ա և 140-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 136-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հաշվի առնելով Թումանյան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 6-ի <<Թումանյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 62-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 50-Ն որոշումը՝ որոշում եմ.

Սահմանել Թումանյան համայնքի 2019 թվականի բյուջեի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 137

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրում ջրամատակարաման ներքին ցանցի հիմնանորոգման և բարելավման աշխատանքները շահագործման ընդունելու նպատակով (գնման պայմանագիր՝ <<ԼՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-19/03>>)՝ *որոշում եմ.*

1.Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1)Մոսինյան Արման - Թումանյան համայնքի ղեկավարի օգնական,

2)Թորոսյան Նորիկ - <<Թումանյան քաղաքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն,

3)Բեգլարյան Հովնան - Լորուտ բնակավայրի վարչական ղեկավար,

4)<<Հիդրոգազշին>> ՍՊԸ-ի հեղինակային հսկողություն իրականացնող ներկայացուցիչ Սամվել Քոչարյան /համաձայնությամբ/

5)<<ԳՈԼԴ-ՆԵԹ>> ՍՊԸ-ի տեխնիկական հսկողություն իրականացնող ներկայացուցիչ Սամսոն Մելիքսեթյան /համաձայնությամբ/

6)ՀՀ վերահսկողություն իրականացնող քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչ Ալեքսանդր Հարությունյան /համաձայնությամբ/

7)ՀՀ վերահսկողություն իրականացնող քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ Աշոտ Նալբանդյան /համաձայնությամբ/:

2.Հանձնարարել հանձնաժողովին՝ ուումնասիրելու և կազմելու ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 138-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով սեփականության վկայագիրը, տրվ.29.10.1993թ. և քաղաքացուհի Թեհմինե Սուրենի Խաչիկյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հանգուցյալ Մալիանա Զարմայիլի Խաչիկյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյանի շրջանի Թումանյան բանավանի բնակելի տանը մակերեսի չափը՝53,2 քմ տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 7-րդ փողոց,շենք 10,բն.19>> հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 139-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԼՈՐՈՒՏ 7-ՐԴ ՓՈՂՈՑ,ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆԵԼԼԻ,ԿԱՐԵՆ, ԱԼԻԿ,ՍԻԼՎԱ,ՀՐԱՆՈՒՇ ԵՎ ԿԱՄՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասի>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով,ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով 31.10.2019թ. ժառանգության իրավունքի վկայագիրը /սեղանամատյան 3184/,<<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հիմք ընդունելով Կամո Սերյոժայի Կարապետյանի /մուտք 04.12.2019թ. թիվ 404 / դիմումը՝
որոշում եմ.

1.Վերականգնել և ճանաչել քաղաքացի Նելլի,Կարեն,Ալիկ,Սիլվա,Հրանուշ և Կամո Կարապետյանների բաժնային սեփականության իրավունքը,Թումանյան համայնք, գ.Լորուտ, 7-րդ փողոց,տուն 12 հասցեում գտնվող /06-045-0064-0005 ծածկագրի/ 0,33443 հա մակերեսով հողամասի և հողամասում 1962 թվականին կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:
2. Վերականգնել և ճանաչե լքաղաքացի Նելլի,Կարեն,Ալիկ,Սիլվա,Հրանուշ և Կամո Կարապետյանների բաժնային սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գ. Լորուտ 06-045-126-000013 ծածկագրի 0,24 հա, 06-045-119-000046 ծածկագրի 1,85 հա, 06-045-130-000005 ծածկագրի 1,22հա մակերեսով վարելահողերի և 06-045-126-000012 ծածկագրի 0,26 հա, 06-045-130-000004 ծածկագրի 0,544 և 06-045-209-000007 ծածկագրի 1,67հա մակերեսներով խոտհարքների նկատմամբ:
3.Նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, կառուցված չեն առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:
4.Բնակելի տան զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ ՀՀՀողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում,այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
5.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6.Անշարժ գույքին տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք ,գ.Լորուտ,7-րդ փողոց,թիվ 12 >> հասցեն:
7.Նշված սեփականության իրավոնքը ենթակա է պետական գրանցման:
8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 140-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-004-0012-0009 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42 ,43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ) ենթակետով, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների դրույթներով և հիմք ընդունելով Արման Սեյրանի Շահվերդյանի /մուտք 05.12.2019թ. թիվ 407/դիմումը՝
որոշում եմ.

1. Արման Սեյրանի Շահվերդյանի կողմից Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի բնակավայրերի հողերի 06-004-0012-0009 ծածկագրից առանձնացված 0,00643հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 18,9քմ մակերեսով ծածկի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը և համարել օրինական:
2. Նշված շինությանը տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, Թումանյան քաղաք,3-րդ, փողոց,թիվ 3/5 հասցեն:
3. Ծածկը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60–րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4.Սույն որոշումը՝ կից հատակագծով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված շինության և զբաղեցրած հողամասի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:
5.Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունն իրականացրած քաղ.Արման Սեյրանի Շահվերդյանին՝Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-իթիվ 912-Նորոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով վաճառքի գնին հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ ընդամենը 26000 դրամ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ